ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Լեռնանիստ, /094-55-33-04, 093-47-01-51, lernanist1828@mail.ru,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 մայիսի 2021 թվականի N 26-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 17-րդ հոդվածով

Համայնքի ավագանին *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝*

Հաստատել Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնքի ավագանու 2021 թվականի մայիսի 7- ի թիվ 4 արտահերթ նիստի ՕՐԱԿԱՐԳԸ՝

1. Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնքի գլխավոր հատակագծի մշակման նախագծման առաջադրանքին հավանություն տալու մասին:
2. Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 4-ի N 45-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՎԱԳՅԱՆ ԳԵՆԱԴԻ
2. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՍԱՄՎԵԼ
3. ԲԱՐԵՂԱՄՅԱՆ ԳՐԻԳՈՐԻ
4. ԳՐԻԳՈՐՅԱՆ ՌԱԶՄԻԿ
5. ՋՈՀՐԱԲՅԱՆ ՔԵՐՈԲ
6. ՄԱՆՈՒԿՅԱՆ ՌՈՄԱՆ
7. ՄԵԼՔՈՆՅԱՆ ԻՍԱՀԱԿ
8. ՆԱՋԱՐՅԱՆ ՄԵԽԱԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՐՏՅՈՄ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Լեռնանիստ, /094-55-33-04, 093-47-01-51, lernanist1828@mail.ru,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 մայիսի 2021 թվականի N 27-Ա

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾԻ ՄՇԱԿՄԱՆ ՆԱԽԱԳԾՄԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔԻՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42 -րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջներով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

Համայնքի ավագանին ***Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝***

1. Հավանություն տալ Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնքի գլխավոր հատակագծի մշակման նախագծման առաջադրանքին /նախագծման առաջադրանքը կցվում է/:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՎԱԳՅԱՆ ԳԵՆԱԴԻ
2. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՍԱՄՎԵԼ
3. ԲԱՐԵՂԱՄՅԱՆ ԳՐԻԳՈՐԻ
4. ԳՐԻԳՈՐՅԱՆ ՌԱԶՄԻԿ
5. ԶՈՀՐԱԲՅԱՆ ՔԵՐՈԲ
6. ՄԱՆՈՒԿՅԱՆ ՌՈՄԱՆ
7. ՄԵԼՔՈՆՅԱՆ ԻՍԱՀԱԿ
8. ՆԱԶԱՐՅԱՆ ՄԵԽԱԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՐՏՅՈՄ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ**

Հաստատված է՝
ՀՀ Կոտայքի մարզի Լեռնանիստ
համայնքի ավագանու կողմից
« » « » 2021թ.

ՆԱԽԱԳԾՄԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

ՀՀ Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնքի (բնակավայրի) գլխավոր հատակագծի մշակման

1. Համայնքի հիմնական բնութագիրը

Համայնքի վարչական սահմաններում ընդգրկված տարածքը՝	**4541,03 հա**
Բնակչության թիվը՝	**3177 մարդ**
Հողային ֆոնդի փաստացի բաշխումը, այդ թվում՝	
բնակավայրերի հողեր, որից՝	**257,04 հա,**
բնակելի	207,48 հա
հասարակական	1,87 հա
խառը	0,0 հա
ընդհանուր	26,75 հա
այլ հողեր	20,94 հա
գյուղատնտեսական նշանակության հողեր, որից՝	**4259,04 հա,**
վարելահող	1079,02 հա
բազմ. տնկարկներ	0,0 հա
խոտհարք	910,0 հա
արոտ	1835,26 հա
այլ հողատեսքեր	434,76 հա
արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողեր, որից՝	**15,88 հա,**
արդյունաբերության	0,17 հա
գյուղատնտեսական	15,71 հա
պահեստարանների	0,0 հա
էներգետիկայի, տրանսպորտի, կապի և կոմունալ ենթակառուցվածքների հողեր, որից՝	**0,42 հա,**

էներգետիկայի	0,10 հա
կապի	0,10 հա
կոմունալ	0,22 հա
տրանսպորտի	0,0 հա
հատուկ պահպանվող տարածքների հողեր, որից՝	**7,78 հա,**
պատմական և մշակութային հողեր	7,78 հա
հատուկ նշանակության հողեր՝	**0,0 հա,**
անտառային հողեր՝	**0,0 հա,**
ջրային հողեր, որից՝	**0,87 հա,**
ջրանցքներ	0,30 հա
լճեր	0,49 հա
հիդրոտեխնիկական և ջրտնտ. այլ	0,08հա
պահուստային հողեր՝	**0,0 հա**

Հողային ֆոնդի բաշխումն ըստ սեփականության սուբյեկտների՝

քաղաքացիների սեփականություն	1915,54 հա
իրավաբանական անձանց սեփականություն	2,59 հա
համայնքային սեփականություն	2125,43 հա
պետական սեփականություն	497,47 հա

(Կցվում է հողային ֆոնդի առկայության և բաշխման ձև N 22 և ձև N 22 ա հաշվետվության լուսապատճենը)

Հողային ֆոնդի ցուցանիշները բերված են 2020 թվականին հաստատված հողային հաշվեկշռով և ենթակա են ճշտման՝ օրենսդրությամբ սահմանված կարգով:

2. Ռեսուրսների հիմնական տեսակները, արտադրության գերիշխող ճյուղերը, ինժեներատրանսպորտային ապահովվածությունը

Տվյալներ համայնքում առկա բնական, բուժական, առողջարարական, հանքահումքային և այլ պաշարների վերաբերյալ

Համայնքում առկա արտադրության գերիշխող ճյուղեր են համարվում մեղվապահությունը, անասնապահությունը, հացահատիկային մշակաբույսերի մշակությունը:

Տվյալ համայնքում առկա արտադրության գերիշխող ճյուղերի վերաբերյալ

Համայնքը միջհամայնքային ավտոճանապարհով կապված է Երևան-Սևան /Մ4/ հանրապետական նշանակության ավտոմայրուղու, ինչպես նաև մարզկենտրոն Հրազդան քաղաքի հետ:

Համայնքն ապահովված է էլեկտրամատակարարման և գազամատակարարման ցանցերով: Համայնքի՝ լուսավորություն ունեցող փողոցների տեսակարար կշիռն ընդհանուր փողոցների մեջ կազմում է 65%:

Համայնքն ապահովված չէ խմելու և ոռոգման ջրի համակարգերով:

Տվյալներ համայնքի ինժեներատրանսպորտային և կոմունալ ենթակառուցվածքների վերաբերյալ

3.Համայնքի զարգացման հիմնական հեռանկարային ուղղությունները

Համայնքի զարգացման հիմնական հեռանկարային ուղղություններն են մեղվապահությունը, անասնապահությունը, հացահատիկային մշակաբույսերի մշակությունը, ինչպես նաև հանգստի գործունեության և տուրիզմի կազմակերպումը:

Համայնքի զարգացման ծրագրից բխող սոցիալական, մշակութային, արդյունաբերական, ինժեներատրանսպորտային և այլ համակարգերի կատարելագործմանը ներկայացվող հիմնական պահանջները

4. Նախագծման հիմքը

«Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքը, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքը, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքը, ՀՀ կառավարության 2001թ. մայիսի 14-ի «Բնակավայրերի տարածքների զոտևորման նախագծերի, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման և փոփոխման կարգը հաստատելու մասին N 408 որոշումը և ՀՀ կառավարության 2011թ. դեկտեմբերի 29-ի «ՀՀ համայնքների /բնակավայրերի/ գլխավոր հատակագծերի և համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման ու փոփոխման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության 2003 թվականի մայիսի 2-ի N 609-Ն ու 2010թ մարտի 4-ի N 208-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1920-Ն և 2003 թվականի մայիսի 2-ի N 625-Ն, ՀՀ կառավարության 2014 թվականի նոյեմբերի 19-ի N 1325-Ն որոշումները:

5. Համայնքի զարգացմանն առնչվող պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների որոշումները

ՀՀ Կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 4-ի թիվ 1618-Ն որոշում, ՀՀ կառավարության 2012 թվականի հոկտեմբերի 25-ի թիվ 1351-Ն որոշում, համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 12-ի «Համայնքի զարգացման հնգամյա ծրագիրը հաստատելու մասին» N 82-Ն որոշում:

Որոշումների ընդունման ժամկետները, համարը (կցել պատճենները)

6. Քաղաքաշինական (այդ թվում հատուկ կարգավորման օբյեկտների), գյուղատնտեսական, բնապահպանական, պատմամշակութային և այլ սահմանափակումներին, ինչպես նաև բնական և տեխնածին վտանգավոր երևույթներից տարածքների պաշտպանության միջոցառումներին վերաբերող հիմնական պահանջները

Գլխավոր հատակագծում նախատեսել ՀՀ կառավարության 2007 թվականի մարտի 15-ի թիվ 385-Ն որոշմամբ հաստատված Լեռնանիստ համայնքի տարածքում գտնվող պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ցանկը՝ գերեզմանոց, գյուղատեղի, խաչքարեր, մատուռներ, մատուռ Սուրբ Հակոբ, «Հուշարձան Երկրորդ աշխարհամարտում զոհվածներին», «Սուրբ Մարիամ Աստվածածին» եկեղեցի, և այլ պատմության և մշակույթի հուշարձանների պահպանական գոտիների համակարգը: Պարզեցված գլխավոր հատակագծի նախագծի տեքստային մասում սահմանված կարգով ներառել պահպանական գոտիների օգտագործման պայմանակարգերը (ռեժիմը), հուշարձանի պահպանական գոտում առկա պատմական միջավայրի անխաթար պահպանությունն ապահովելու համար

(«Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» ՀՀ օրենք, հոդված 16):

Բնակավայրի տարածքային զարգացումը նախատեսել բնակության համար անվտանգ և բարենպաստ միջավայրի ձևավորման, տրանսպորտի, կապի, քաղաքացիական պաշտպանության, ինժեներատեխնիկական, սոցիալական ենթակառուցվածքների կատարելագործման, բնական և տեխնածին վտանգավոր երևույթներից (այդ թվում՝ երկրաշարժից) տարածքների պաշտպանության, սեյսմիկ ռիսկի նվազեցման անհրաժեշտ միջոցառումների ապահովմամբ՝ համաձայն ՀՀ կառավարության 2012 թվականի փետրվարի 9-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի հունիսի 10-ի N 429 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» N 138-Ն որոշմամբ և այլ իրավական ակտերով սահմանված պահանջների:

Նշել սահմանափակումների վերաբերյալ տեղեկատվությունը (դրանց առկայության դեպքում)

7. Տեղեկատվություն համայնքում առկա ելակետային տվյալների վերաբերյալ (առկայության դեպքում)

Ելակետային տվյալներ են հանդիսացել ՀՀ կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 4-ի թիվ 1618-Ն որոշմամբ Լեռնանիստ համայնքի վարչական սահմաններում գտնվող՝ պետական սեփականություն հանդիսացող հողամասերն անհատույց սեփականության իրավունքով համայնքին փոխանցելու մասին, կադաստրային և հողօգտագործման քարտեզները, տվյալներ տարածքի փաստացի օգտագործման վերաբերյալ, տվյալներ բնակելի, հասարակական և արտադրական կառուցապատման վերաբերյալ, տվյալներ կոմունալ տնտեսության և ինժեներատրանսպորտային ենթակառուցվածքների առկա իրավիճակի մասին, դեմոգրաֆիկ տվյալներ, համայնքի զարգացմանն առնչվող պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների որոշումների պատճեններ:

Համայնքի գլխավոր հատակագծի մշակման համար համայնքին կտրամադրվի լիազոր մարմնի կողմից սահմանված կարգով հաստատված սեյսմիկ միկրոշրջանացման քարտեզը և սահմանված կարգով հաստատված ինժեներաերկրաբանական շրջանացման քարտեզը՝ համաձայն ՀՀ կառավարության 2003թ. մայիսի 2-ի N 625–Ն որոշումով հաստատված հավելված 3-ի 3-րդ կետի և ՀՀ կառավարության 2011թ. դեկտեմբերի 29-ի N 1920–Ն որոշումով հաստատված հավելված 1-ի II գլխի 5-րդ կետի պահանջների:

Նախկինում հաստատված քաղաքաշինական ծրագրային հողաշինական փաստաթղթերի տեղագրական հանույթները, կադաստրային քարտեզագրման նյութերն ու անշարժ գույքի նկատմամբ փաստացի հողօգտագործումների տվյալները, այլ տվյալները (այդ թվում փաստացի հողօգտագործումների սեփականության սուբյեկտների վերաբերյալ տեղեկատվություն), սահմանված կարգով հաստատված սեյսմիկ շրջանացման և միկրոշրջանացման քարտեզներ ինժեներաերկրաբանական շրջանացման «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ –ից

8. Համայնքի զարգացման առանձնահատկություններից բխող այլ լրացուցիչ պահանջներ

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ համայնքի կադաստրային քարտեզը համայնքի ամբողջ վարչական տարածքը և համայնքի հողատարածքների համատարած և ոչ նպատակահարմար մասնավորեցումը բերել է անհրաժեշտ ենթակառուցվածքային և ծավալատարածական զարգացման փակուղի, անհրաժեշտություն է առաջանում մշակել նոր

գլխավոր հատակագիծ և տարածքի գոտիավորման նախագիծ, որոնցով կսահմանվեն համայնքի հետագա զարգացման առաջնային, միջնաժամկետ և հեռանկարային փուլերը:

Համագործակցել էներգետիկական ցանցերը տնօրինող և շահագործող («Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ, «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ և «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ, «Տրանսգազ» ՍՊԸ) ընկերությունների հետ՝ պարզեցված գլխավոր հատակագծում էներգետիկական ցանցերն ու դրանց անվտանգության գոտիները ճշգրիտ արտացոլելու նպատակով:

անհրաժեշտության դեպքում նշել լրացուցիչ պայմանները

9. Համայնքի գոտևորման նախագծին և հողերի գոտիավորման և օգտագործման սխեմային ներկայացվող պահանջները.

Համայնքի գլխավոր հատակագծի կազմում ներառվելու են նաև հողերի գոտիավորման և օգտագործման սխեմայի, ինչպես նաև բնակավայրի և բնակավայրից դուրս կառուցապատման ենթակա տարածքների գոտիավորման նախագծի մշակումը՝ ՀՀ կառավարության 2003 թվականի մայիսի 2-ի N 625-Ն որոշմամբ:

10.Նախագծի գրաֆիկական և տեքստային մասերին ներկայացվող հիմնական պահանջները.

Համայնքի տարածական զարգացման հիմնական հեռանկարային ուղղությունները, այդ թվում՝ ճարտարապետահատակագծային և գործառնական զարգացումը, ինժեներատրանսպորտային ենթակառուցվածքների սպասարկման ու զարգացման կազմակերպումը, գծային օբյեկտների պահպանմանն ու կատարելագործմանը, շրջակա միջավայրի, լանդշաֆտների պահպանությանն ու կատարելագործմանը, քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման տարածքների առանձնացմանը, տարածքների կազմակերպմանն ու կառուցապատմանը, պատմության և մշակութային հուշարձանների պահպանությանը ներկայացվող հիմնական պահանջները:

Գրաֆիկական մասով պարզեցված գլխավոր հատակագիծը մշակվում է հետևյալ բովանդակությամբ և կազմով՝ համայնքի առկա վիճակի հատակագիծ /հենակետային հատակագիծ/, սեփականության սուբյեկտների գծագիր, ռիսկերի և սահմանափակումների քարտեզ /համալիր գնահատման հատակագիծ/, ինժեներաերկրաբանական շրջանացման և սեյսմիկ միկրոշրջանացման քարտեզ, համայնքի տարածական զարգացման հատակագիծ /հիմնական գծագիր/, բնության, պատմության և մշակույթի հատուկ պահպանվող տարածքները, դրանց պահպանման գոտիները, հողամասերի նպատակային և գործառնական նշանակությունների փոփոխությունների գծագիրը, հատակագծի իրականացման հերթականությունը, կառուցապատված և կառուցապատման ենթակա տարածքների գոտևորման գծագիր:

ի լրումն օրենսդրությամբ սահմանված նախագծի կազմին ու բովանդակությանը ներկայացվող պահանջներ (առկայության դեպքում)

Համայնքի ղեկավար՝ **Ա. Հայրապետյան**

Առաջադրանքը կազմեց՝ **Հ. Մարգարյան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Լեռնանիստ, /094-55-33-04, 093-47-01-51, lernanist1828@mail.ru,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 մայիսի 2021 թվականի N 28 -Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 4-Ի N 45-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 32-րդ հոդվածի 5-րդ մասով և <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 33-րդ հոդվածի պահանջներով

Համայնքի ավագանին Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

1. Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 4-ի <<Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնքի 2021 թվականի բյուջեն հաստատելու մասին>> N 45-Ն որոշման մեջ կատարել փոփոխություններ՝

Վարչական բյուջե

1) 01.1.1.51 / Օրենսդիր, գործադիր մարմիններ, պետական կառավարում/ ծրագրի

ա/ 4111 /Աշխատավարձ/ հոդվածի ,, 33300.0 ,, թիվը փոխարինել ,, 31800.0,, թվով

բ/ 4112 / պարգևատրում / հոդվածի ,, 2720.0 ,, թիվը փոխարինել ,,2635.0 ,, թվով

գ/ 4211/ Գործառնական և բանկային ծառայությունների ծախսերի/ հոդվածի ,, 35.0 ,, թիվը փոխարինել ,, 0 ,, թվով

դ/ 4215 /ապպահովագրություն / հոդվածի ,, 30.0 ,, թիվը փոխարինել ,, 23.0 ,, թվով

ե/ 4221 /գործուղում / հոդվածի ,, 100.0 ,, թիվը փոխարինել ,,50.0 ,, թվով

զ/ 4239 / ընդհանուր բնույթի ծառայություններ/ հոդվածի ,, 960.0 ,, թիվը փոխարինել ,,700.0 ,, թվով

է/ 4241/ Մասնագիտական ծառայություններ / հոդվածի ,, 850.0 ,, թիվը փոխարինել ,, 80.0 ,, թվով

ը/ 4251 / Շենք և շինությունների ընթացիկ նորոգում և պահպանում /հոդվածի ,, 850.0 ,, թիվը փոխարինել ,,450.0 ,, թվով

թ/ 4267 /Տնտեսական ապրանքներ և հանրային սնունդ/ հոդվածի ,, 300.0 ,, թիվը ,, 220.0 ,, թվով

2) 04.5.1.51 / Ճանապարհային տնտեսություն/ ծրագրի 4264 /տրանսպորտային նյութեր/ հոդվածի ,,900.0 ,, թիվը փոխարինել ,, 700.0 ,, թվով

3) 05.1.1.51 /Աղբահանություն/ ծրագրի 4213 /Կոմունալ ծառայություններ / հոդվածի ,, 250.0 ,, թիվը փոխարինել ,, 180.0 ,, թվով

4) 10.7.1. / սոցիալական աջակցություն/ ծրագրի 4726 / հուղարկավորության նպաստ / հոդվածի ,, 500.0,, թիվը փոխարինել ,, 300.0 ,, թվով

5) 10.7.1. / սոցիալական աջակցություն/ ծրագրի 4727 կրթական, մշակութային և սպորտային նպաստներ բյուջեից / հոդվածի ,, 500.0 ,, փոխարինել ,, 300.0 ,, թվով

/ Վարչական բյուջեի փոփոխություններից հավաքագրված 3857.0 հազ դրամ գումարից 500,0 հազ դրամ հատկացնել ճանապարհների ընթացիկ նորոգման համար, իսկ 3357,0 հազ դրամը տեղափոխել վարչական բյուջեի 4891 /պահուստային ֆոնդին/.
6) 04.5.1.51 / ճանապարհային տնտեսություն/ ծրագրի 4251 /շենք և շինությունների ընթացիկ նորոգում/ հոդվածի ,, 1850.0 ,, թիվը փոխարինել ,,2350.0 ,, թվով
7) 11.1.2.51 /Պահուստային ֆոնդ/ ծրագրի 4891 / պահուստային ֆոնդ/ հոդվածի ,, 3014.6 ,, թիվը փոխարինել ,, 6371.6 ,, թվով

Ֆոնդային բյուջե

Վարչական բյուջեի պահուստային ֆոնդի միջոցները ամբողջությամբ ուղղել ֆոնդային բյուջե ներհամայնքային ճանապարհների կապիտալ վերանորոգման և նախագծահետազոտական ծախսերի կատարման համար
11.1.2.51 /Պահուստային ֆոնդ/ ծրագրի 4891 / պահուստային ֆոնդ/ հոդվածի ,, 6371,6 ,, թիվը փոխարինել ,, 0 ,, թվով
49.1 եկանուտ խմբի վարչական բյուջե պահուստային ֆոնդից հատկացում ֆոնդային բյուջե 6371.6 հազար դրամ
Լեռնանիստ համայնքի բյուջեով հաստատված ֆոնդային մասի հողի օտարումից մուտքերը ավելացնել 1000.0 հազ դրամով և այն ուղղել ներհամայնքային ճանապարհների կապիտալ վերանորոգման համար

1) 04.5.1.51 /ճնապարհային տնտեսություն/ ծրագրի
ա/ 5113 /շենք և շինությունների հիմնանորոգում/ հոդվածի ,, 3708.4 ,, թիվը փոխարինել ,,11020.0 ,, թվով:
բ/ 5134 /նախագծհետազոտական ծախսեր / հոդվածի ,,400.0 ,, թիվը փոխարինել ,, 460.0,, թվով:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՎԱԳՅԱՆ ԳԵՆԱԴԻ
2. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՍԱՄՎԵԼ
3. ԲԱՐԵՂԱՄՅԱՆ ԳՐԻԳՈՐԻ
4. ԳՐԻԳՈՐՅԱՆ ՌԱԶՄԻԿ
5. ՋՈՀՐԱԲՅԱՆ ՔԵՐՈԲ
6. ՄԱՆՈՒԿՅԱՆ ՌՈՄԱՆ
7. ՄԵԼՔՈՆՅԱՆ ԻՍԱՀԱԿ
8. ՆԱԶԱՐՅԱՆ ՄԵԽԱԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՐՏՅՈՄ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ**